

լամութեան մականին վերապահուած թորչքներ, որոնք նոյն ազգայնականութեան եւ թուրանական ձգտումներուն զսպանակով աւելի իմաստ ու բախտ ունին ձեւ ու մարմին ստանալու, կարգանք իր վերջին խօսքը .

«Եզրակացնելու համար, ամէն բանէ առաջ Թուրքիոյ ներկայ յեղաշրջումէն պէտք է հանել սա՛ դասը՝ թէ որքան ժողովուրդը իւրացնէ արդիական դադափարները, այնքա՛ն պիտի ամրապնդուի նոր իրաւակարգը, որուն շնորհած ազատութիւններէն չպիտի հրաժարին թուրք քաղաքացիները, քանի որ վերջապէս ձեռք բերուած այս ազատութիւնները ամէն օր աւելի եւս անկարելի կը դարձնեն ամէն վերադարձ դէպի հին աւանդութիւնները: Այս ճամբուն վրայ գեռ ընելիք շատ բան կայ, սակայն թափը տրուած է եւ շարժումը պիտի չեղաուի»:

Ուրիշ կերպ արտայայտուելով, երբ հայերս կ'ոտոտատենք քննադատութիւններէ քննադատութիւն, թուրքերը այդ ժամանակ առաջ կ'երթան, կը հասունանան եւ կ'արդիանան: Եւ եթէ մեր երեսէն չհեռացնեն թուրքերու պատած եւ ջնջած հարէմական քօղը, օր մը մեզ պիտի գանենք մեր ճաներուն եւ յօգուածներու դէզերուն տակ գեղնած ու նուաղած, եթէ երբեք հայութեան այժմու վիճակը լուսագոյն յայտարարը չէ մեր ազգային անիւի յետադարձ թաւալումին:

Անցած են այն բարի շրջանները, երբ եւրոպացիք ու մարդկութիւնը, իրաւացի թէ յանիրաւի, հայն ու յոյնը եւ ուրիշները քաղաքակրթութեան միակ սերմնացանները կը դաւանէին Արեւելքի մէջ, իսկ թրքութիւնը լոկ ջարդարարներ եւ քաջ զինուորներ: Մամուռ կը կապէ հին օրերու կարծիքներուն վրայ: Եւրոպական նոյնքան եւ աւելի ազդեցիկ թերթի մը («Թայմզ») Պոլսոյ թղթակիցն է դարձեալ գրողը, Թուրքիոյ եւ մեծ պետութեանց յարաբերութիւններուն նուիրուած յօդուածի մը մէջ:

«Ազդերու Գանակցութենէն դուրս մնալով, Թուրքիա առանձնաբաժանուող զիրք մը կը գրուէ եւրոպական եւ ասիական քաղաքականութեան մէջ: Ասիոյ մէջ, կը ճանչցուի իրրեւ

ռահահօրդը արեւմտեան քաղաքակրթութեան: Եւրոպայի կողմը տեսակ մը կասկածանքով կը դիտուի ան (Թուրքիան), թէ եւ միեւնոյն տեսն հիացում կը տիրէ Մուսթաֆա Քեմալի օրով կատարուած նշանակալից յառաջդիմութեան մասին»:

Բայց, Թուրքիան ու թուրքերը ճանչցող հայերս՝ միամտութիւն գործած պիտի ըլլալինք լոկ եւրոպացի հեղինակէն, ճամբորդէն եւ թղթակիցէն սորվիլ ու քաղել սիրելով ի՛նչ որ կ'անցնի—կը դառնայ Վոսփօրի տիրէն մինչեւ Սաքարիա, Սաքարիայէն Ալիս գետ եւ մինչեւ Եփրատ ու Վանայ լիճը: Բաւական են քիչ մը հոտառութիւն, տեսնելու աչք, դնահատելու ընդունակութիւն եւ հին կանգուններն ու չուանները կոտրելու ունէ փորձ մեր կողմէ, որպէսզի համոզուինք՝ թէ մեր դիտցած թուրքերը չեն էնկիւրի նստող, աշխատող, աքնող եւ պայքարող քեմալականները, այլ ուրիշ տեսակի մարդիկ, որոնք մնալով հանդերձ հայութեան երդուեալ եւ անուղղայ թշնամիները, անիմանալի ճիգեր կ'ընեն վերածաղկելու իրր ազգ եւ ժողովուրդ, ու գրաւելու իրենց գիրքը՝ Մերձաւոր Արեւելքի մէջ եւ աւելի հեռաւոր երկիրներու աչքին առջեւ որպէս մարդիչ ու ռահահօրդ, գաղափարախօս եւ ներշնչող:

Այսքանը մենք պէտք է ըմբռնենք՝ եթէ ոչ ճշմարտութեան ու իրողութիւններու լեզուին պահանջը իրրեւ, այլ յանուն մեր ազգային քէնին, ատելութեան ու արգար վրէժիւնդրութեան՝ դէպի բարբարոս եւ արիւնամարալ թուրքերը:

Սուլթան Մէճիտի «Թանգիմար»ը եւ Միահաթ փաշայի ու Իթթիհատի Սահմանագրութիւնները անարժէք երեւոյթներ չեն թրքական պատմութեան մէջ: Եթէ անոնք չյաջողեցան իրենց գործերուն համար, հող պատրաստեցին ու հարքեցին քեմալականութեան հաշուոյն: Այստեղ եւս կը շեշտուի Մուսթաֆա Քեմալի բարենորոգումներուն բնական հոլովոյթը՝ իրր արդիւնք եւ հետեւանք նո՛ր պայմաններու, նո՛ր միջավայրի, որով «Քեմալի փորձերուն տրուած անխուսափելի դատաւճիոր» պարզապէս տհասութիւն ու թիւրիմացութիւն է ընկ. Ռուրէնի կողմէ: